

լեզրիներ (599, 762), թաթեր—թալիչներ (130, 347) և այլն։ Ազգաւորակութեան ընդհանուր թիւն է 5967086։

Անգրկովկասի անահատկան-իրառական կեանքը ուսումնասիրելիս անհրաժեշտ է աղղերին առանձին, առանձին վերցնել, քանի որ նրանք իրանց կուլտուրական-անտեսական գարողացմամբ իրարից շատ խիստ տարրերում են։ Կան աղղեր, որոնք մինչեւ օրս էլ ոչնչով աչքի չեն ընկել, ոչ մի քաղաքական ոյժ չեն ներկայացրել (ինչպէս օրինակ Օսմանիները, Սվանետացիք և ուրիշները). Կան այնպիսիները, որոնք մինչեւ օրս էլ մի տեսակ կիսաթափառական—աւազակային կեանք են վարում (քրդեր, թարաքամա, չերքեղներ և այլն). և վերջապէս կան աղղեր, որոնք պատմական աշքի բնելող անցեալ և որոշ կուլտուրա ունին (Հայեր և վրացիներ)։

Այս աշխատութեան մէջ ևս ուսումնասիրել եմ այս ազգների հողային պայմանները, որոնք իրենց թուական շատութեամբ կամ կուլտուրայով աչքի են ընկնաւմ։

Հ. Մաւսայելեան.



ԲԱԴԱ ԳԻՒՂԻ ԱԽԵՐՈՒԽՄԸ

Գ.

Կոտորած Զագեամ կայարանում. Դեսպանութիւն Ալլահիար բեկի մօ. Յարձակումն Զառչի գոմերի վերայ. Հայերի փախուսը բինաներից դեպի գիւղ. Ալլահիար բեկի գալուսը Բադացոց մօ.

Անցնենք կրկին պատմութեան թելին։

Կուսացաւ ուրբաթ չարաբաստիկ առաւոտը, նոյեմբերի 18-ը, այսինքն, ուղիղ Գանձակի կոտորածի և կողեպուտի օրը և կէս օրից յետոյ, երեկոյեան դէմ բաթաբեր գոյժն ընկաւ Բադայի մէջ։ Մե քանի Բադացիներ, որոնք մշակութեամբ կամ առեւտրական գործերով զբաղուած էին երկաթուղու Զագեամ կայարանում, շնչառպառ հազիւ կարողացել էին փախստեամբ գեւզ ծգել իրանց։ Սրանք լուր բերեն, որ այդ օրը թուրքերը մի քանի պարագլուխների ազգեցութեամբ, մինչեւ անդամ առաջնորդութեամբ յարձակուել են Զագեամ կայարանում և երկաթագծի վերայ գտնող հայերի վերայ. ցըել, կողոպտել և ոմանց մահացըել են։ Այս բօթաբերները հաղորդում էին,

որ այդ օրը թուրք ջանքեզար կուսակցութեան տեղական հօմիտէի, Նօխարի Այինիլու գիւղացի, պարագլու խները Գանձակից ստացել են հեռագրեր, որոնցով Դանձակից ծանուցանում էին որանց, որ Գանձակում հայ և ռուս միացած կոտորել են բոլոր թուրքերին, ուստի հարկաւոր է սկսել Զագեամի կոտորածը:

Զագեամի կոտորածը նկարագրում է Թիֆլիզում կարճատե հրատարակուող «Արշալոյ» լրագիրն (№ 62, Նոյեմբերի 23-ից 1905թ.): Յիշեալ ըադսի թղթակցի առելով այս կողմէնի կողոպուտ սպանութիւնների կազմակերպողները էին թուրք բէդերեց, առաջաւորներից և կառավարութեան թուրք ծառայողներից մը քանիոք, որոնց անունները թւում էին:

Զագեամի կայարանի գրասենեկապետը (կանոօրչչիկ) հեռագրել է իւրչ երկաթուղիների հաւթանցքի վարչութեանը, որ նոյեմբերի 19-ին վաղ առաւօտ սկսուել է հայկական կոտորած: Առաւօտեան ժամի 11-ին, կայարանի մօտ, ճանապարհի նորոգութեան հանքակացարանում (կազմորմա) կտորեկտոր է արուած աւագ բանուր Մարտիրոսեանի կինը ու վիրաւորուել են նրա մանուկները: Նաւթանցքային կայարանում թուրքերը հայեր էին որոնում, բայց ծառայողների ջանքերի չնորհիւ նրանց չյաջնորդուեց գտնել: Հին Զագեամում թուրքերը կոտորել են բոլոր հայերին և գիշերը հրդեհել են նրանց տները: Փորձել են հրդեհել և հաշտարար դատարանին կից բանութը, բայց ժամանակին նկատելով՝ նրա տռաջն առել են և հբացանաձգութեան ժամանակը, ասում են, սպանուել են 4 թուրք: Զագեամի կայարանը պաշտպանելու համար, նոյեմբերի 19-ին կային միայն 32 զինուոր *:

Երկաթուղու գծի վրայ պատահած դէպքերի նկարագրութիւնը թողնելով Դազախի գաւառի ընդհարմանց իմ կազմած պատմութեանը, եռ նորից վերադառնում եմ Բագա:

Այսպէս, նոյեմբերի 18-ի երեկոյին գիւղ հատան Զագեամից ազատուածները և Խիստիրարանցում յառաջ բերին գիւղի մէջ, ուր, ինչպէս վերը յիշած է, ոչ քուն ունէին ոչ հանգիստ:

Պայմանական սուլոցով գիւղամէջ ժողովեցին բազմութիւնը և խորհրդի կանգնեցին մի ելք գտնելու: Բնական է, որ բազմաթիւ գլուխներ մի տեղ հաւաքուած՝ ամեն տեսակ մըտքեր և կարծեքներ են արտայայտում: Չորս կողմից թրքարնակ գիւղեցով շրջապատուած միայնակ կանգնած Բագան չէր կա-

բող սառնութեամբ նայել իւր ամենամօտիկ սպառնալէց ապաշգայի վերայ: Իւր փրկութեան յոյսը գնել իւր թոյլ, անդլուս, չկազմակերպուած ոյժի վերայ, շատ էլ վատահ չեր: Ապաւինել 20 վերսու հեռու Զարդակալուի վերայ, այդ էլ բացայացտ անիսազործելի էր, բայ որում նա, Զարդակալուն, Բաղային հաւասար մի գիւղ, հաղիւ կարսզ է իւր զլուխը պաշտպանել. կառավարութեան օդնութեան դիմել անկարելի էր, պէտք էր հասնել Գանձակ, իսկ մինչև Գանձակ բալու տեղերում վըստում էին թուրք հրատակները: Ո՞ւր դիմեն, ո՞ւմ պատառեն, ո՞ւմ ձեռք մեկնեն, չգիտէին:

Գլուխը կորցրած բազմութիւնը, շիւղը քանոզ խեզզւողի նման, նորից կանգ առաւ դրացի Ալլահիար բէզ Զիւլգադարովի գթասրբութեան և վեհանձնութեան վրայ: Միահամուռ սրչեցին դիմել նրա օդնութեանը:

Աւտի՞ իսկոյն ընտրեցին մի քանի առաջաւոր մարդիկ, այն է, Յոհաննէս Նուշանեանցին, Դահրաման Դաթոյեանցին, Գալուստ Խարբեանցին, Ս. Ե. Թարսեղեանցին, Սարդիս Արգումանեանցին, Պօղոս Մերատեանցին և ուրիշներին մինչև 12 հոգի և նրանց պարագլուխ Գրիգոր քահանայ Տէր Աքրահամեանցին և, իրեւ գեսպանութիւն Բագայի հասարակութեան կողմից, պատուիրեցին որ շաբաթ օրը, Նոյեմբերի 19, տուաւոտեան արշալոյսին, համարեամ մթնոլ, թուրք գիւղերում աննկատելի, ուղեսորուեն դէպի Խըննալու Ալլահիար բէզի մօտ:

Բէզը սիրով ընդունեց պատգամաւորութիւնը, արժանաւորապէս պատուասիրեց: ոկզբում խիստ զարմանք արտայացտեց պոտմուած եղելութիւնների մասին, իրեւ անսպասելի և անհաւատալի մի իրողութիւն և ապա նորից յուսագրեց, որ Բագային ոչ մի սպառնալիք, ոչ մի վնաս չի լինել: որ Բագայի իրանն է և բագացիք նրա հարազաները, և խոսացաւ անձամբ այցելել գիւղը նոյն պատգամաւորութեան հետ, որի համար և պահեց իւր մօտ պատգամաւորներին:

Նաբաթ առաւօտ, նոյեմբերի 19-ին, արեալացին, այն ժամին, երբ հայ գեսպանութիւնը Խըննալիում աղերսում էր Ալլահեար բէզին, գիւղի արևելեան կողմից, ուր 4-5 վերսու հեռու Զաւշի կոչուած բինաներն են և ուր մինչև 30 տուն բազացիներ իրանց բազմաթիւ աղքանքներով մշտապէս աղբում են, լուռեց հրացանի ձայն, որ ապա կրկնուեց կանոնաւոր կերպով մինչև 70 անդամ:

Կարուած, ելէկտրացած բնակիչները իրար խռնուած, իսկոյն զուրս թափուեցին աներից և զանազան բարձրութիւն-

Ներից զննելով՝ աշխատում էին բացատրութիւն գտնել, բայց ի գուր, ըստ որում ոչինչ չէր երկում։ Զառչի գոմերը գտնուում են բաժակածե փոսի մէջ Զառչի և Քարաղբեկ ւը անուն աղբեւըների ակունքներում, շրջապատուած փոքրիկ բլուրներով։ Աւստի որոշեցին լրաբեր սուրճանդակներ ուղարկել անցքի վայրը և իրանք հոգացին ամբապնդել պահապանների ռազմիկ գիրքերը։

Շուտով վերադարձան սուրճանդակները — Ա. ռ. աքել Վ. արդարեան Նիկողոս եանցն ու Աւետ Խաչատրեանը ե բացատրեցին, որ թուրք հրօսակների մի մասն արդէն յարձակուել է Զառչի գոմերի վրայ, միւսները նոյնպէս ժողովւած են յարձակուելու։ Եինաւորների գրութիւնը սոսկալի է։ Դ. ա. Հարաման Խաչատրու թուրքերին, որ սրանց հոսանքը մի կերպ կանգնեցնի և ջառչիարնակ հայերին միջոց տայ դէպի գիւղը փախշելու։ Հրացաններ են արձակում և թուրքերը, բայց տեղի հեռաւորութեան և փոս լինելու պատճառով ձայնը լսելի չենում։

Գիւղը պաշտպանող 10—12 զինւորներ խսկոյն գնացին օդնութեան և Սանդեալ արք աղքեւրից վերադարձան ձեռնունայն, ըստ որում Զառչի շինութիւնները արդէն բոցավառկրակի մէջ էին։ սարսափահար ընակիւները ձիով, ոտով, երեսամանցով կանանցավ, ամեն ըան թողած թշնամուն, փախչում էին դէպի գիւղ գոնէ իրանց կեանքն ազատելու։

Այս սասկալի եղելութեան մասին խսկոյն հաղորդեցին շըշակայ քինաներին, այն է Թալայ, Գոմեր աձոր, Քեամանդար, Սարքու և Գիւլաբի գոմեր, որ իրանց ճարը տեսնեն։ Արդարեւ մեծ արագութեամբ ըոլոր ըինաներից հաւաքուեցին գիւղ, բերելով իրանց հետ ապրանքները, անառունները, կան կարասիքը և այլն։ Եւ այդ բոպէին գիւղը ներկայացնում էր մի աննկարագրելի, սարսափահար տեսարան։ Տղամարդիկ, կանայք, երեխայք, ապրանք, ոչխարներ, ձիանք, չներ և այլն, իրար էին խառնուած։ Լաց, կոծ, աղաղակ, ձայներ, իրարանցումը աննկարագրելի էր։ ոչ որ չգիտէր թէ ի՞նչ անի, ուր գնայ, ինչ ասի, ում ասի։ խօսք չէին դանում խօսելու, ապուշ էին կտրել ամենքը։

Ինքնապաշտպանութեան գործն իսպառ մոռացուեց։ Ամենքն աշխատում էին մի կերպ աեղաւորացնել ըինաւորներին և գիւղի մէջ եղած ու ըինաներից բերուած բազմաթիւ ապրանքները, ոչխարները և այլն։

Այս կես օրին էր: Սրտաճմլիկ տեսալսանին առաւել արխարութիւն էր տալի ընութիւնը: Թանձր, խոնաւ, աշնան մտութուղը իրար յետեկց գալիս ծածկում էր արեց, գիւղը մարդկանց և նորից հեռանում, որպէս զի տեղ տաց յետեկց եկող միւս աւելի թանձր ամսերին:

Վերջինա յաճախրակի ծածկում էր բաղացոց փրկութեան վերջին յառոց, և ամփի արքի եալի, ճանապարհը, որը պարզ երեսում է գիւղից և որով պէտք է դար Ալլահեար բէգը: Խոկ ոտ չկայ ու չկայ, չկան և պատգամաւորները, արևն էլ թերուել է գէպի իւր մուտքը: Յուսակառուք Բաղացիներն աչքները բևեռած և ամփարքի եալի վրայ՝ միմեանց հարցեր էին տալի թէ բէգն ուշացաւ, բէգը չեկաւ, պատգամաւորներն էլ չեկան: Վերջիններիս չվերագառնալը մեծ մտատանջութիւն էր: Չգիտէին լոնչպէս բացատրեն յապացումը: Մեկնութիւնները բազմաթիւ էին, ոմանք կարծում էին, թէ ներկայացու ցիշները գերուած են, ոմանք թէ՝ սպանուած են, ոմանք թէ՝ բէգն ամէն բան կյածողցնի, կվերջացնի. և այս տարտամ ու մաշող գրութիւնը շարունակուեց մինչեւ 4 ժամը կէս օրից յետոյ:

Խոկ թուրք հրոսակները աղատօրէն և անարդել զբաղուած էին Զառչի աւարձի և յառաջ չէին գալի, որով պատճառ էին տալի բաղացոց խարսնակ յայտերավ Ենթադրել, թէ նրանք վախենում են այլ ևո յառաջ գալու, զոհ կմնան միայն Զառչիով և այլն:

Պատառուած ամպեսի միջով վերջապէս երեացին և ամփարքի աւարձի վերայ մի խումբ ձիւուորներ, որոնք առանց շտապելու գանգաղաքայլ յառաջ էին գալիս: Այս, եղբակացըին բաղացիք, եկողը Ալլահեար բէգն է սպիտակ շորերով, տակի ծին էլ նրանն է երեւում: Ահա խումբն իջաւ Վերի աղքեւը իւր կւիւր փոսը և աներեւութացաւ, 5—6 բոպէից երեաց Վերի աղքեւը կւիւր գլխին և վերջապէս մօտեցաւ գիւղի Եղբին:

Ալլահեար բէգը սպիտակ շերքեղկով, ոսկեպատեան խէն-ջալը կախած, ոսկեգոյն թուրքմանի բարձր ձին հեծած, արժանավայել գանգաղութեամբ դալիս էր խմբի առաջից: Նրան հետեւում էին երեք թուրք թիկնապահներ ոտից մինչեւ գլուխ զինուած, որանց յետեկց գալիս էին Բաղայի պատգամաւորները, իրանց քայլերը յարմարացնելով բէգի քայլերին.

Գիւղական ճանապարհի երկու եղբում պատկ պէս երկարութեամբ շարուել էին արք և կանայք և երեխայք և հայեացքները բևեռել էին Ալլահեար բէգի վերայ, որ ժանը աքայլ

յառաջ էր գնում և լսում էր բարդացոց ազաղակը «բաղ», բաշընդայ գէօննում։ Կօխարդայ ԱԼԼահ, աշաղադա սան, ըստ զուլումնան ըզայ կուրթար (թէդ, գլխովդ պաոյտ գանք վերե հստուած, ներքե դու, այս չարիքեց մեղ ազատիր)։ Բէդը թեթև ժպտալով՝ սիրտ էր տալի ժողովրդին չվախենալ, և հաւատացնում էր, որ ոչինչ չի լինի։ Պատգամաւորներն առաջին անդամ տեսնելով ըննաների խառն ի խուռան փախուստը, տեղ տեղ կանդ էին առնում, ապշում էին և լալիս ու նորից հասնում էին թէդի յետեկեց։ Ժողովուրդը խուռան բազմութեամբ հետեւում էր նրանց։

Հասան զիւղամէջ։ արքունական դպրոցի առաջ թէդը կամեցաւ իջեանել իւր սովորական տեղում։ Յոհաննէս նուշ չոնեանցի տանը, բայց ժողովուրդն աղերսեց նրան կանգ չառնել, շարունակել դէպի Զառչի և խուժանի առաջն առնել։

Թէդը կատարեց հասարակութեան խնդիրը, մտադրուեց գնալ, բայց ցանկացաւ տեսնել դիքքերը և իմանալ նրան զիմադրելու պատրաստութեան չափը։ Անկեզծօրէն ցոյց առւին նրան բոլոր գիքքերը 1) Հանգ ու տարանի մօտ, 2) Տամը բուռա զօքե, 3) բուռա հող, 4) Երից անց զօքեր, 5) Եկեղեցու մօտ և 6) Դիդջե գլուխ։ Բոլոր տեղերում երկայն փոսեր էին փորուած պատապարուելու և պահապաններ էին կարգուած։ Թէդը մի առ մի զննեց դիքքերը, իմացու ուղամական մթերքների քանակը, կուռուղ ոյժերի թիւը և պառուից մարդ չոպանել, ըստ որում կողոպուտը ջնաննամը, կարելի է վերադարձնել, բայց սպանութիւնը կլարի երկուստեք յարաբերութիւնը և աւելի կթշնամացնի երկու կողմն էլ Ալլա դնաց Զառչի, տանելով հետը մի քանի բադացիներ։

ԱԼԼահեար թէդը Զառչիում Փը ու ըշնի ետ բարձրութեան վրայից գիմեց խուժանին, յանդիմաննական խօսքեր արտասանեց, խրատեց որ վերադառնան իրանց աները։ Իսկ խուժանը փոխանակ լսելու առացնրան, որ դնա Խօխարի Այիիւ խորհրդի։

Հաւանական է, որ այդ կենդրոնական խորհուրդները գոյացութիւն ունէին թուրքերում, և առանց ալդ կանոնաւոր կազմակերպութեան թուրքերը չեին կարող մի տնուագ, այն էլ նոյեմբերի 18-ին, յարձակուել հայերի վերաց ամենու ընթացաւ է Գալլարում, Զադեամում, Բադայում, Զարդալւում Գետաբատղում և այլ զիւղերում։

Դ.

Ալլահեար բեղր հարսանիքում. Բադայի փրկանքը. Մերօք քանի հայտնի գեսապանութիւնը գեներալ նահանգապետի մօ:

Զառշաբց Ալլահեար բէզը վերագործաւ: Բագա:

Գիւղակոն զրագիր Մելիք Ծերատեանց երիտասարդեալուակագը թիւնը պէտք է կատարուէք այդ երեկոյ և հար սանեաց ամենատեսակ պատրաստութիւնը, առանց ազետալից գէպքերին կանխադէտ լինելու, տեսել էին որդէն: Միւս կողմից ինքը Ծերատեանցը նոյն և հոսարակութիւնը տագնապալից օրերում անկարող էին հանգէս կոտարել, իսկ յետաձգել անկարոելի էր, ուստի որոշուած էր կոտարել անշուք կերպով:

Մելիք Ծերատեանցը մասնակցում էր Ալլահեար բէզի շքախմբին և խնդրեց բէզին ներկայ լինել հարսանեաց հանգիսին և պատուելով իրան՝ իջևանել իւր տունը: Բէզը որ օտար չէր հայի սեղանին, ընդունեց հըստէքը:

Առանձին ոչխար մորթուեց թուրքի ձեռքով և առանձին կերակուր պատրաստուեց բէզի թիւնապահների համար, նոյնը և բէզի համար: Բէզի սենեակում ներկայ էին մի քանի լուդացիներ, որոնցից ոմանքը կանգնած էին պատի տակ շարքով: Բէզին բացարկեցին, որ նուագ, զուռնայ անյարմար է հրաւիրել ներկայ ժամանակ: Պատկից յետոյ ախուր, արտում անխօս կանգնած էր ժողովուրդը բէզի սենեակում:

Հանդիսաւոր լուսւթեան մէջ բէզը յանկարծ դիմեց յազգագին: «Ե՞ս էք կարծում, ի՞նչ է այս շարժման պատճառը: Պատասխանեցին՝ որ չգիտեն և չեն սպասում: «Խուլիկանների դործ է այդ, շարունակեց բէզը, եկեք այդ փորձանքի առաջն առնենք, մի բան գցենք խուժանի բերանը, դնան՝ կորչեն: իմ կարծիքով՝ միտե միջոցն այդ է: Բէզը լուսւմ և սպասում է պատասխանի: լուս են մնում և գիւղացիք:

Ներկայ եղող Պօղոս Կաւբենանցն առաջարկեց մի հազար ուրբի, միայն թէ ազատուեն: Կարճ մտածմունքից յետոյ բէզն ուրախ գէմքով յայտնեց: «Գէ որ այդպէս է, առէք 15 թաղար էլ գարի:

Այս խօսքերի վերայ ուրախացած, որ բէզն արդէն գիւղն պատել է, գիւղացիներից ոմանք ինքնարելաբար խոստացան նուէներ՝ ով ինչ կարող էր:

Ընթրեքի վերայ հայերն Ալլահեար բէզի կենաց բաժակ:

առաջարկելով՝ յիշեցնում էին, որ նախկին բաղացեք և Զիւլ-դադարովների նախնական եղել են փոխագարձ քարե-կամներ և այժմ էլ իրանք բէզեց խնդրում են օգնութիւն։ Ալլահեար բէզն առնելով մի կտոր հաց, ցանեց վրան աղ և տուց, «Երգւում եմ այս աղ ու հացով, որ Բագան ոչ ոքի ձեռքը չեմ տաց. բագացեք իմ ազգատահմից են, իմ աւլազո (զաւակ) են. և ի նշան հաստատութեան այս երդման, ըստ սովորութեան մահմետականների՝ ձգեց աղ ու հացը գետին. ոեղանի վերայ թողնելը անհաստատութեան նշան է։ Ընթրիքեց յետոյ իւր հանգստութեան համար բէզը գնաց Պօղոս Եաւրի-եանցի տունը։

Հետեւեալ օրը Ալլահեար բէզը իւր յոկնած ձին թողեց Յով-հաննէս Շուշանեանցի մօտ, պատուիրելով ուղարկել իւր տուն, ինքը հեծաւ Պօղոս Շերատեանցի նժոյգը՝ դուրս գնաց գիւղից և զեռ չէր հասել այդինեսի սահմանը, յանկարծ ազմուկ վայնա-սուն բարձրացաւ գիւղի վերի մասում, և շուտով պարզուեց, որ Ալլահեար բէզի Խըննալու և Խըմաշլու զիւղերի թուրքենը Գաբաղի իւր զից, որ Ալլահեար բէզի ընակութեան մօտ է, քշել տարել են նոյն բէզի մտերիմ բարեկամ Յովհաննէս Շուշանեանի 1200 զլուխ ոչխարները թուրք հովեւների հետ միա-սին։ Սրա հետ կողոպտել են և Շուշանեանի բնացի տան իրե-զէնները։ Թէ՛ զիւղից օդնութիւն ուղարկեցին, բայց արդէն ուշ էր։

Այս զէպքն արթնացրեց ժողովրդին. Նա տեսաւ, որ Ալլահ-եար բէզը, ոքքոն և անկեղծ լինէին նրա խոստումները, անկա-րող էր թուրքը խուժանի կատաղութիւնը զսպել։ Թողին փրկան-քով ազատուելու միտքը, մտածեցին գիմել կառավարութեանը զօրք խնդրելու նպատակով։

Գիւղական գատարանի շինութեան մէջ շուտախոյթ կազ-մեցին խառն ժողով, որոշեցին խնդրագիր ներկայացնել գենե-րալ-նահանգապետին և խնդիրը Գանձակ տասելու և անձամբ ներկայացնելու համար, որ հեշտ չէր, այլ հաւասար մահարեր փորձէ, ըստրեցին Մեսրոք քահանաց Ստեփանեանցին, որ այդ միջոցին Զարդարիլու զիւղումն էր և արքունական գպրոցի ու-սուցիչ Գագիկի Տէր Առտուածատրեանցին, որը ստիայն շուտով հրաժարուեց։

Նրկուշարթի, նոյեմբերի 21 յարձակում չեղաւ թուրքերի կողմից, որ վերագրեցին Ալլահեար բէզի խոստումների ճըշ-մարտութեանը, սակայն ոմանք պնդում էին, որ պէտք է զի-մել դեներալ-նահանգապետին։

Աւստի Մեսրոբ քահանան աշխարհականի հագուստով, երկու զինեալ ընկերների հետ ուղի ընկաւ ստով Գաղտնի ուղարկութեանը կեանքի ապահովութեան համար թողին ճանապարհը և ընկան սար ու ձոր, թփերի ու փշերի մէջ։ Խաւար, ամպամած գիշերով հասան Խ առ խ առ տեղը և նկատեցին, որ մօտ 50 ձիաւոր թուրքեր արագութեամբ քշում են բազմաթիւ ոչխար, աւելի քան 1500 գլուխ յետոյ իմացուեց, որ նրանք կողոպաել են դանձակեցի Սողոմոն Տաւարածեանին Մլաւիանկա ուռոգիւ մօտ ու յայտնի ուխտատեղի Յուլանը ըլսի աւերակ վանքի մօտով տարել են նամբոր՝ Հասան բէդ Սուլթանովի տունը։

Սոյն այս Հասան բէդն, ինչպէս կտեսնենք Դաղախի ընդհարութների պատմութեան մէջ, ոպանուել է Շամշադինու Կորմիք աղբեւը կամ Քեօսալար գիշեղ վերայ յարձակման ժամանակ և նրա ընկերները գիշեկի վիզը թոկ ձգած ձիով քարշ են տուել մինչև 0 քեւզի գիշը։

Հասնելով գիշերը Ֆրէզէսկա ուռու գիշեղը, ծպտեալ Տէր Մեսրոբն իւր ընկերներով ընկաւ ուռու գիշերապահների ձեռքը, որոնք տարան նրանց Գետարագի նոր նշանակուած ուռու պրիստաւ Նէպիլովի մօտ, որ այդ գիշեր, նոյեմբ. 20-ին իջևանել էր տեղական ուռու քահանայի տանը։ Ուռու քահանան ճանաչեց Մեսրոբ քահանային, հարցրեց Բագայի վիճակի մասին և պրիստաւը շատ ափսոսաց, որ իւր ընդամէնը չորս սարաժնիկի օգնութեամբ չէ կարող բագացոց համար փրկութիւն ձեռք ըերել։ Սրա մասին յիշում է ինքը Նէպիլոն իւր ժանուցման մէջ դեներալ-նահանգապետին տաւած^{*)}։

Նոյեմբերի 22-ին, Երեքշաբթի առաւօտեան պրիստաւն առնելով Մեսրոբ քահանային և նրա ուղեկիցներին՝ գնաց Չարդալու, որպէս զի կարողունայ այնտեղից հեռագրել Դանձակ Չարք ուղարկելու մասին։ Դակայն Չարդալուում այդ միջոցին մեծ իրարանցում էր տիրում։ Զօրք չէր եկել, թուրք հրոսակ-ները կարել էին Դալլարի և Չարդալուի միջև եղած Գետարագի հեռագրաթեին և իրանք շըջապատել էին Չարդալու գիշը, որ հերսուարաը դիմադրում էր խուժանին։ Պրիստաւն և Մեսրոբ քահանան նորից վերագարածն Ֆրէզէսկայ, ուր ըլաւը բարձրութիւնից նկատել են, որ այցւում էին Բագայի մերձակայ։ Քեամագագու, 0 ջաղջուկի, Գոմերա մօր և Քիւլարի ըինաներն, այլ և այգիների տներն ու ցանկապատերը։


* «Մշակ» № 15 Յունուարի 22-ից 1906 թ.

Սի կողմից Զարդախլուի վերայ, միւս կողմից Բագային վերայ կատարուող յարձակումներն այդ օրն այնքան վախեցրին Ֆրէզէկայի ռուս ընակիչներին, որ նրանք սահմանակայի պրիուտաւին տանել նրանց Սլավանկա: Պրիստաւն էլ, ամբողջ գեւզը, բայց տղամարդկանցից, միանդամից տեղափոխեց Սլավանկայ: Այս հանգամանքից սահմանակայի թուրով քահանան իւր ընկերներով նրան օրը գնաց գեշերելու Զարդախլու:

Զարդախլուից Գանձակ գնալն երկիւզալի դարձաւ, փոստն էլ խանդարուած էր. այն ինչ Բագայի խնդիրը մնում էր անշարժ, ուստի այդ խնդիրը, Զարդախլուի տանուաէրի վեկուցումը գաւառապետին գեւզի պաշարուած վիճակի մասին և Մեսրոքահանացի մի նամակը Բագայի վիճակի մասին յաջորդ Կորիւն վարդապետի վերայ՝ յանձնուեցին մի ռուս սարամնիկի, որ տանի հասցնի Գանձակ քսան և հինգ ռուբլի վարդատրութեամբ նոյեմբերի 23 ին, չորեքշաբթի Բագայից Զարդախլու հառանգետոս Խաչատրեանը և Վուկան Պօղոսեանը, որ նախ Զարդախլուից օգնութիւն խնդրեն և երկրորդ՝ խնդրատրուների վիճակից աեղեկանան: Հասկանալի է, որ Զարդախլուն, ինքը շրջապատուած լինելով թուրք խուժանով, չէր կարող օդնութեան ձեռք մեկնել Բագային: Ուրեմն գեսալանները ձեռնունայն վերադարձան:

Քաջբերունի.

Կը շարունակուի



Պրոֆ. Ն. Մատի թուղթը Անիում հնագիտական ինսիտուտ
հիմնելու համար:

Առվկասի հպարտութիւնը՝ զարդարանքներն և գտնձեցնեն, որ պարզ են է նրան բնութիւնը: Գոցանից լուադոյների հետ հաւատար կրվկասը կարող է նուև հպարտանալ երկնքի մի այլ քաղաքու կըթական գանձով—Անիի աւերտակներով, այս էւր հնագիտական թագի մէջ ամենատեսք մարդարիտով:

Պահապանելով իւր անուան մէջ, Առվկասի կեանքի ամենաշին շրջանում ունեցած իւր գոյութեան անհերքելի վասառեր, շրջան, որ յաջարկեց արիական գաղթականութեան, աւելի ուշ շրջանում Անին անառիկ քերդ գարձած—Ճառայում էր իւրի յուսոյ կայարան նշանաւոր աւատական ցեղի կամոարական եշտաների, որ աղդական էին Արշակունիներին: